ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/34, 22.05.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019/ՀՏԳԱԲ-50 *ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,* համակարգչային տեխնիկայի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել և/կամ չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ ընդունված *«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:*

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ,

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Ք. Երևան, Մելիք-Ադամյան 1

Բողոքաբեր՝ ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ

Տնօրեն Վ. Խաչատրյան

Էլ հասցե. info@technoforum.am

Հեռ. 091-00-96-10

Ք. Երևան, Շիրազի 36, բն 14

Պատվիրատու՝ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ք. Երևան, Նալբանդյան 130

Գնման առարկան և ծածկագիրը՝ <ՀՀՈԳՀԱՊՁԲ-2019-ՀՏ/ԳԱԲ-50> ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

Բողոք

Հարգելի բողոք քննող անձ, Ձեզ ուշադրությանն եմ ներկայացնում այն հանգամանքի, որ ՀՀ ոստիկանության կողմից անհիմն մերժվել է մեր կազմակերպության հայտը, նախապատվություն տալով այլ կազմակերպության:

Հիմա ավելի մանրամասն.

ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ մասնակցության փաթեթ է ուղարկել ՀՀ ոստիկանության համապատասխան ՀՀՈԳՀԱՊՁԲ-2019-ՀՏ/ԳԱԲ-50 մրցույթին մասնակցելու համար և միայն N 8 չափանաժնի մասով ճանարվել է 1 տեղ զբաղեցնող մասնակից համաձայն գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության:

Հանձնաժողովը ֆինանսական միջոցները ստուգելու նպատակով հարցում է արել ՀՀ ՊԵԿ:

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ ՊԵԿ եզրակացության ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ ակտիվները կազմել են 7 268 120 դրամ, իսկ պարտավորությունները կազմել են 123 334 403 դրամ:

Հանձնաժողովը արձանագրել է այս խնդիրը և հնարավորություն է տվել մեզ այն շտկելու:

Մեր կազմակերպության կողմից կատարվել է համապատասխան շտկումը, որի համաձայն պատրավորութոյունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքին:

Սակայն գնահատող հանձնաժողովը N 3 թեև արձանագրել է որ սահմանված մեկ օրյա ժամկետում շտկվել է անհամապատասխանությունները, սակայն ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ հայտը մերժվում է:

Կարծում ենք որ ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ հայտը բավարարում է Գնումների մասին օրենքի 6 հոդվածի 3 մասի 4 կետի պահանջին, իսկ պատվիրատուն հայտը մերժելով խախտել է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 47 և 48 կետերի պահանջները, քանի որ համապատասխան շտկումը ներկայացնելու հետո նշված կետերի համաձայն մեր կազմակերպության հայտը չէր կարող մերժվեր:

Այս ամենով պայմանավորված, խնդրում եմ Գնումների մասին օրենքի 50 հոդվածի համաձայն՝ դադարեցնել և/կամ չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի N 3 արձանագրությամբ ընդունված ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ հայտը մերժելու մասին որոշումը:

Ներկայացվում է Ձեզ ակտիվների և պարտավորությունների շտկված տարբերակը, N 3 արձանագրությունը և բողոքի համար նախատեսված վճարի անդորրագրի պատճենը (11 թերթ):

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ տնօրեն Վ ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.05.2019թ.